ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ – 2 փուլ (25 միավոր)

_____

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

(մարզ, դպրոց)

Հեռ.՝_____

I. 1-30-րդ հարցերի արժեքը 0,5 միավոր է: 31-35-րդ հարցերի արժեքը 1 միավոր է: Դրական միավոր կարելի է ստանալ հարցը ամբողջական ճիշտ գրելու դեպքում: Թերի, կիսատ, ոչ ամբողջական կամ սխալ պատասխանները գնահատվում են 0 միավոր: Տետրում ջնջումները համարվելու են սխալ: Տառերը անհրաժեշտ է գրել հստակ և ձեռագրի համար ընդունելի ձևով:

II. 36-րդ հարցը շարադրանք է, որը գնահատվում է 5 միավոր, յուրաքանչյուր քայլը 0,5 միավոր:

1. Այրարատի նահանգի ո՞ր գավառում էր գտնվում Ձիրավի դաշտը.

ա/ Բասեն բ/ Բագրևանդ գ/ Ծաղկոտն դ/ Կոգովիտ

2. Որքա՞ն է Ճորոխ գետի երկարությունը.

ա/ 305 կմ բ/ 345 կմ գ/ 351 կմ դ/ 435 կմ

3. Ե՞րբ է Պարթևստանում գահ բարձրացել Գոդերձ II–ը.

ա/ Ք.ա. 89 թ. բ/ Ք.ա. 88 թ. գ/ Ք.ա. 87 թ. դ/ Ք.ա. 92 թ.

4. Ե՞րբ Տրդատ II–ը ստիպված հեռացավ Հռոմեական կայսրության սահմանները.

ա/ 252 թ. բ/ 254 թ. գ/ 250 թ. դ/ 238 թ.

5. Ե՞րբ է գումարվել Շահապիվանի եկեղեցական ժողովը.

ա/ 441 թ. բ/ 444 թ. գ/ 443 թ. դ/ 447 թ.

6. Ե՞րբ է Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև կնքվել «հավիտենական» հաշտությունը.

ա/ 536 թ. բ/ 532 թ. գ/ 534 թ. դ/ 538 թ.

7. Ո՞վ է հիմնադրել Աղբերց վանքի դպրոցը.

ա/ Հովհան Որոտնեցի բ/ Վահրամ Ռաբունի գ/ Ներսես Մշեցի դ/ Եսայի Նչեցի

8. Քանի՞ գավառների բաժանվեց Երևանի նահանգը 1874 թ. օրենքով.

ա/ 6 բ/ 7 գ/ 8 դ/ 5

9. Քանի՞ ինքնաթիռ է կործանել Սերգեյ Բուռնազյանը.

ա/ 20 բ/ 22 գ/ 24 դ/ 26

10. Ե՞րբ բացվեց Հայոց համազգային շարժման առաջին համագումարը.

ա/ 1989 թ. նոյեմբերի 28–ին բ/ 1989 թ. մայիսի 25–ին

գ/ 1989 թ. հունվարի 11–ին դ/ 1989 թ. նոյեմբերի 4–ին

11. Ո՞վ է Սասունի 1904 թ. ապստամբության հարավային կողմի հրամանատարը.

ա/ Հրայր բ/ Գ. Չավուշ գ/ Անդրանիկ դ/ Թորգոմ

12. Քանի՞ հոգուց էր բաղկացած Արևմտահայ ազգային խորհուրդը.

ա/ 15 բ/ 20 գ/ 25 դ/ 228

13. Ովքե՞ր են ընդունել գաղտնի հրամանը.

Ով «կընդդիմանա այս սրբազան և հայրենասիրական գործին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ որևէ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի հայրենիքի ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի»:

ա. Թալեաթը, Էնվերը, Նազիմը բ. Թալեաթը, Էնվերը, Ջեմալը

գ. Բեհաէդդին Շաքիրը, Ջեմալ Ազմին դ. Թալեաթը և Բեհաէդդին Շաքիրը

14. Ի՞նչ իրադարձություն է նկարագրված մեջբերվող հատվածում.

«Այսպիսի անարգ նենգությամբ դյուրահավատությունը խարդավանվեց. օտարականի արյունը փրփրելով թափվեց շքեղ սեղանածածկոցների վրա՝ դեմ հանդիման հյուրասիրության, Ասպծո հյուրընկալության ժամանակ, և այնուհետև ճաշկերույթի մասնակիցները, որոնք չափից ավելի հագեցած էին, բոլորովին սարսափահար եղան ու փախան»:

ա. Պապի սպանությունը
բ. Վահան Մամիկոնյանի սպանությունը
գ. Մերուժան Արծրունու սպանությունը
դ. Մուշեղ Մաիկոնյանի սպանությունը

15. Ո՞վ է մեջբերվող հատվածի հեղինակը.

«Այսուհետև զորացե՛ք և քա՛ջ եղեք՝ որպես քաջարի զավակներ, և ոչ ոքից ու ոչնչից մի՛ երկնչեք, որովհետև ահա հասել է քրիստոնյաների փրկության ժամանակը»:

ա. Եսայի Հասան-Ջալալյան
բ. Ղևոնդ
գ. Եղիշե
դ. Վահրամ Պահլավունի

16. Ընտրե՛ք սխալ պնդումները.

ա/ Միհրդատ Եվպատորը նահանջեց իր տերության հյուսիսային երկրամասեր, որտեղ էլ Ք. ա. 63 թ. ինքնասպան եղավ:
բ/ Տիգրանակերտը կառուցվել է Ք. ա. 80-70-ական թթ. Աղձնիք նահանգում՝ Արևմտյան Տիգրիսի ձախակողմյան վտակներից մեկի ափին:
գ/ Ք. ա. 68 թ. գարնանը Լուկուլլոսի բանակը դուրս եկավ Կոմմագենեից և անցնելով Հայկական Տավրոսը՝ Արածանի գետի ափերով շարժվեց դեպի Արտաշատ:
դ/ Տիգրանակերտի ճակատամարտից հետո քաղաքը պաշտպանող օտար վարձկանները, կաշառվելով Պոմպեոսի կողմից, հոկտեմբերի վերջերին դարպասները բացեցին հռոմեացիների առջև:
ե/ Ք. ա. 68 թ. սեպտեմբերի 22-ին հռոմեացիները մոտեցան Արածանիի գետանցին, որից հետո Հայկական Պար լեռնաշղթան էր, իսկ այնուհետև՝ Արտաշատը:
զ/Արածանիի ճակատամարտից հետո Լուկուլլոսը ստիպված էր թողնել Հայաստանի սահմանները, Կորդուքն ու Կոմմագենեն:
է/ Ք. ա. 89 թ. Միհրդատ Պոնտացին հայկական բանակով հարձակման անցավ հռոմեացիների դեմ և, գրավելով ամբողջ Փոքր Ասիան, պատերազմը տեղափոխեց եվրոպական տարածք:

17. Ընտրե՛ք ճիշտ պնդումները.

ա/ Ռուսա 1-ինը շարունակել է Սարդուրի 2-րդի քայլերը գերկենտրոնացված պետություն ստեղծելու ճանապարհին:
բ/ Վանի թագավորությունը արևմտաեվրոպական տիպի բացարձակ միապետություն էր:
գ/ Վանի թագավորությունում զինված ուժերի կորիզը կազմում էր արքունի մշտական զորաբանակը, որը խաղաղ պայմաններում տեղակայվում էր արքունական բերդերում, ամրոցներում և սահմանային զորանոցներում:
դ/ Վանի թագավորությունում զորքի գերագույն հրամանատարը երկու սպարապետներն էին:
ե/ Ըստ «Սարդուրյան տարեգրության» զինված ուժերի ընդհանուր թիվը շուրջ 350 000 էր:
զ/ Վանի թագավորության նվաճած երկրներում իշխանությունը կարող էր թողնվել նախկին թագավորին կամ ցեղապետին, որը թեև հարկ չէր վճարում, սակայն պարտավորվում էր իր զորքով մասնակցել Վանի տիրակալի արշավանքներին:
է/ Հայկազուն-Երվանդականները Հայաստանում իշխել են միայն Ք. ա. 521-331 թթ.:

18. Ընտրե՛ք սխալ պնդումները.
ա/ Տեղեկանալով, որ Գրիգորը Տարոնում է, Տրդատ Մեծը, Աշխեն թագուհին, Խոսրովիդուխտը և հայոց զորքը գնում են նրան ընդառաջ, հասնում են Բագավան՝ Նպատ լեռան ստորոտը, և մեծ պատիվներով դիմավորում Տարոնից այնտեղ եկած կաթողիկոսին:
բ/ Սուրբ Գրիգորը, քարոզչության ու ավետարանության գործը տարածելով Հայաստանում, արևմուտքում հասցնում է Սատաղ քաղաքից մինչև Խաղտյաց երկիր՝ Կղարջքի մոտ, հյուսիսում՝ Ալանաց դռները, արևելքում՝ Կասպից ծովի սահմանները, հարավում՝ Կորդուք գավառը, Նոր Շիրական երկիրը և Ատրպատականը:
գ/ Գրիգոր Լուսավորիչը Տարոնում՝ Քարքե լեռան լանջին, դնում է Իննակնյա Ս. Կարապետ, Աշտիշատում՝ Ս. Երրորդություն եկեղեցիների հիմքերը:
դ/Հայկական պետականությունը նախարարական համակարգի միջոցով պահպանվել է միայն զարգացած միջնադարում:
ե/Հայաստանում հասարակական հարաբերությունները հնուց զարգանում էին համապետական՝ նախարարական հողատիրության պայմաններում:
զ/ Գանձագին հողերը պետական էին՝ ենթակա առուվաճառքի:
է/ Մեծ Հայքի թագավորության ժամանակաշրջանում գոյություն են ունեցել չորս բդեշխություն՝ Աղձնիքի, Կորդուքի, Նոր Շիրականի և Գուգարքի:

19. Ընտրե՛ք ճիշտ պնդումները.
ա/ Խոսրով 1-ինի և Վահրամ Չուբինի միջև վճռական ճակատամարտը տեղի է ունենում Ատրպատականում:
բ/ 591 թ. բաժանումով Հայաստանի մեծ մասն անցավ Հռոմեական կայսրությանը:
գ/ «Մեծ մասն Մեծ Հայոց» նահանգը տարածվում էր մինչև Սև ծովի ափերը:
դ/ «Մասն Մեծ Հայոց» նահանգը զբաղեցնում էր Ծոփքի տարածքը:
ե/«Մեծ Հայք» նահանգը ընդգրկում էր Տուրուբերանի տարածքը:
զ/ «Խորագոյն Հայք» նահանգը տարածվում էր Տայքի շրջանում:
է/ «Ներքսագոյն Հայք» նահանգը ընդգրկում էր Այրարատ նահանգի մեծ մասը:

20. Տրված տարբերակներից ընտրե՛ք սխալ պնդումները:
ա/ 1947 թ. ապրիլի 30–ից մայիսի 4–ը Նյու Յորքում կայացած Հայկական համաշխարհային կոնգրեսին մասնակցում էին 22 երկրների 715 պատգամավորներ:
բ/ «Նաիրի» երկրանունն առաջին անգամ հիշատակված է Ք.ա. XIII դ. առաջին կեսին Ասորեստանի Սալմանասար I թագավորի կողմից:
գ/ Ք.ա. 715 թ. աշնանը հյուսիսից անակնկալ հայտնվեցին քոչվոր կիմերների ցեղերը՝ ասպատակելով Վանի թագավորության տարածքները:
դ/ Քրիստոնեության ընդունումից առաջ հայալեզու նշանագրերի կիրառության մասին է վկայում հույն պատմիչ Փիլոստրատոսը (I-II դդ.):
ե/ 1991 թ. գարնանը Ադրբեջանի իշխանությունները, խորհրդային բանակի հետ համագործակցելով մշակեցին «Կոլցո» («Օղակ») ռազմական գործողության ծրագիրը:
զ/ 804 թ. Աշոտ Մսակերը խալիֆայության կողմից պաշտոնապես ճանաչվեց հայոց իշխանաց իշխան, իսկ նրա եղբայր Շապուհը նշանակվեց սպարապետ:
է/ XVII դարի սկզբին օսմանյան արքունիքում սկսվել էին երկպառակություններ:
ը/ Արաքսի ձախ ափին Մենուան հիմնում է ռազմավարական խոշոր հենակետ՝ Մենուախինիլին:
թ/ Արտաշես I–ի հրամանով կանգնեցված սահմանաքարերից շուրջ քսանը ունեն հայերեն արձանագրություններ:

21. Ընտրե՛ք տերմինների ճիշտ բացատրությունները:

ա/ Հայ իշխանը՝ նախարարը, իր տոհմական իրավունքի սկզբունքով կոչվել է նաև տանուտեր:
բ/ Արտաշատում տիրող կարգ ու կանոնին հետևում էր թագավորական տնտեսը՝ ոստանիկը:
գ/ Քաղքեդոնի տիեզերական ժողովը ընդունել էր Քրիստոսի՝ «մեկ անձ, մեկ բնություն» բացատրությունը: Այդ բանաձևի հետևորդները հետագայում կոչվեցին քաղքեդոնականներ կամ միաբնակներ:
դ/ Արաբները բռնազավթում էին հայ նախարարների տիրույթների մի մասը՝ ստեղծելով ամիրսպասալարություններ կոչվող վարչաքաղաքական միավորներ:
ե/ 725 թ. Հերթ ոստիկանի «աշխարհագրից» հետո գլխահարկը փոխարինվեց ծխահարկով:
զ/ Բագրատունիների կառավարման ժամանակաշրջանում մեծապես կիրառվում էր եռադաշտային համակարգը:
է/ Կիլիկյան հայկական թագավորությունում արքունիքից առանձին էին գործում բարձրագույն դատական ատյանը և գործակալությունները:
ը/ Կիլիկիայում քաղաքապետի պաշտոնը զբաղեցնողը կոչվում էր նաև սենեսկալ:
թ/ Արտավազդը Կրասոսին խոստացավ տրամադրել 24 հազարանոց այրուձի և 16 հազարանոց հետևակ (ընդամենը՝ 40 հազար զինվոր):
ժ/ Տրդատ III–ը Արտավազդ Մանդակունուն նշանակել է հազարապետ:

22. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.
ա/ Ժողովրդավարական հեղափոխության սկիզբը Ռուսաստանում
բ/ Եկեղեցու գույքի բռնագրավման օրենքի չեղարկումը
գ/ Եկեղեցու գույքի բռնագրավման դեմ ցույցը Ալեքսանդրապոլում
դ/ Գոլիցինի դեմ մահափորձը
ե/ Հայկական եկեղեցու գույքի բռնագրավման մասին օրենքը
զ/ Հայ-թաթարական բախումների սկիզբը Բաքվում

23. Սասունի 1904 թ. ինքնապաշտպանության իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.
ա/ Հրայրի զոհվելը
բ/ Հարավային կողմից հարձակումը
գ/ Թուրքական զորքերի կողմից Սասունի ճանապարհների գրավումը
դ/ Գելիեգուզանի գրավումը
ե/ Տալվորիկի գրավումը
զ/ Թորգոմի խմբի հասնելը Սասուն
է/ Ինքնապաշտպանության զինվորական մարմնի ստեղծումը

24. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ.
ա/ Բեհաէդդին Շաքիրի սպանությունը
բ/ Էնվերի և Նազըմի դատավճիռը
գ/ Երեք մեծ տերությունների հայտարարությունը ընդդեմ հայկական կոտորածների
դ/ ԱՄՆ-ի կառավարության բողոքը ընդդեմ հայերի նկատմամբ իրականացվող բռնությունների
ե/ Ցեղասպանության հանցագործության կոնվենցիայի ընդունումը
զ/ Իշխանի և Վռամյանի սպանությունը
է/ Թուրքիայում ռազմական ատյանների հիմնումը
ը/ Ուրֆայի դիմադրության ավարտը

25. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ.

ա/ Հայկական մարզի ստեղծում
բ/ Կովկասի փոխարքայության հիմնում
գ/ Եկեղեցական կանոնադրության հրապարակում
դ/ Թանզիմաթի հրապարակում
ե/ Ադրիանուպոլսի պայմանագրի կնքում
զ/ Հայկական մարզի վերացում
է/ «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակի ստեղծում

26. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ.
ա/ Շրջանառության մեջ մտավ գյուղմիասհարկը
բ/ Հայաստանի տնտեսությունը հասավ նախապատերազմյան՝ 1913 թ. մակարդակին
գ/ Հայաստանի գավառային բաժանումը վերացվեց և ստեղծվեցին 25 շրջաններ
դ/ Էջմիածնում խեղդամահ արվեց կաթողիկոս Խորեն Մուրադբեգյանը
ե/ Հատուկ որոշումով արգելվեց եկեղեցու կողմից Հայոց եղեռնի օրվա՝ ապրիլի 24–ի նշումը
զ/ Ստեղծվեց Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ)
է/ Հովհաննես Ադամյանը աշխարհում առաջինը ստեղծեց և Երևանում ցուցադրեց եռագույն հեռուստատեսության և լուսահեռագրության սարքը
ը/ Ա. Թամանյանը կազմեց Երևանի գլխավոր հատակագիծը
թ/ Կազմակերպվեց Հայաստանի կերպարվեստի թանգարանը
ժ/ Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսի բեմադրությամբ բացվեց հանրապետության առաջին պետական դրամատիկական թատրոնը

27. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.
ա/ Սալահ ադ Դինի կառավարման ավարտը
բ/ Լևոն 1-ինի եղբոր գահակալման սկիզբը
գ/ Լամբրոնի անցնելը Ռուբինյաններին
դ/ Հենրիխ 6-րդը թագ ուղարկեց Լևոն 2-րդին
ե/ Խաչակրաց 3-րդ արշավանքի սկիզբը
զ/ Գրիգոր Զ Ապիրատի կաթողիկոսության ավարտը

28. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.
ա/ Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը
բ/ Վ. Լենինի «կոմունիստ ընկերներին» ուղղված հրահանգ նամակը
գ/ Անդրդաշնություն կազմելու մասին միութենական պայմանագրի ստորագրումը
դ/ Խորհրդային հանրապետությունների և Խորհրդային Ռուսաստանի միջև միջպետական փոխհարաբերությունների կարգավորման համար հատուկ հանձնաժողովի ստեղծումը
ե/ ԽՍՀՄ կազմավորման Միութենական պայմանագրի նախագծի հաստատումը
զ/ Մոսկվայի պայմանագրի համաձայն թուրքական ուժերի լքելը Ալեքսանդրապոլը
է/ ՌՍԴԽՀ հուշագիրը ուղղված քեմալականներին, որն անհրաժեշտ էր համարում նախատեսվող կոնֆերանսին Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությունը
ը/Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի հայտարարությունը «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի Հանրապետության մաս ճանաչելու» մասին

29. Կատարել համապատասխանեցում.

1.Դիլմանի ճակատամարտ	ա/ Քեռի
2. Ռևանդուզի ճակատամարտ	բ/ Հովսեփ Արղության
3. Խիզանի գրավումը	գ/ Բեհաէդդին Շաքիր
4. Մուշի գրավումը	դ/ Սազոնով
5. Ռուսաստանի արտաքին գործերի նախարար	ե/ Անդրանիկ
6. Թուրքական երրորդ բանակի հրամանատար	զ/ Էնվեր
7. Հատուկ կազմակերպության ղեկավար	է/ Դրո
8. Հայոց ազգային բյուրոյի գործադիր մարմին	ը/ Համազասպ
	թ/Ջեմալ

30. Կատարել համապատասխանեցում.

1. Առաքել Դավրիժեցի	ա/ «Պատմութիւն»
2. Եսայի Հասան-Ջալալյան	բ/ «Պատմութիւն պատերազմաց»
3. Սերգեյ Գլինկա	գ/ «Պատմութիւն Դավիթ բեկին»
4. Ստեփանոս Շահումյան	դ/ «Հայոց պատմութիւն»
5. Աբրահամ Երևանցի	ե/ «Գիրք պատմութեանց»
6. Զաքարիա Քանաքեռցի	զ/ «Համառօտ պատմութիւն Աղուանից»
7. Միքայել Չամչյան	է/ «Հայ ժողովրդի պատմության տեսություն»
	ը/ «Տեղագիր Վերին Հայոց»

31. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ:

ա/ Ք.ա. 20 թ. հռոմեական բանակը կանգնած էր Հայաստանի սահմանագլխին:
բ/ Կարակալլան 215 թ. խաբեությամբ իր մոտ՝ Ասորիք է հրավիրում Խոսրով Ի-ին:
գ/ Պարթևստանում 51-81 թթ. իշխեց Վաղարշ Արշակունին:
դ/ Ի թիվս այլոց՝ հյուսիսից Կորբուլոնին դաշնակցում էր վրաց Փարսման թագավորը:
ե/ Ներոնը 64 թ. Վաղարշ Ի-ին հայտնում է, որ եթե Տրդատն անձամբ մեկնի Հռոմ և թագը ստանա իրենից, ապա ինքը կճանաչի նրան Հայաստանի թագավոր:
զ/ 161 թ. հայոց գահը հանձնվում է Բակուր Արշակունուն, որին սակայն հռոմեացիները գահընկեց են անում և տանում Հռոմ (164 թ.):

32. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ:

ա/ 1502 թ. կարա-կոյունլուներին պարտության մատնելուց և նրանց մայրաքաղաք Թավրիզը գրավելուց հետո, Սեֆյանները հիմնադրեցին իրենց պետությունը:
բ/ XIII-XIV դդ. թուրքական ու քրդական զանազան ցեղեր մշտական բնակություն են հաստատել Հայաստանում:
գ/ 4-7-րդ դարում խաչանկարներով և որմնանկարներով զարդարված էին Քասախի, Ս. Էջմիածնի, Տեկորի, Զվարթնոցի, Արուճի եկեղեցիները:
դ/ Կարա-Յուսուֆի մահից հետո գահն անցնում է նրա եղբորը՝ Ջհանշահին (1437-1467 թթ.):
ե/ Տաթևի համալսարանը հատկապես բեղմնավոր գործունեություն է ծավալել XIV դ. երկրորդ կեսին - XV դ. սկզբին:
զ/ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարներում պատկերված է Գագիկ Արծրունին, իսկ Տիգրան Հոնենցի եկեղեցում՝ Տրդատ 3-րդը և Սուրբ Գրիգոր Լուսավորիչը:

33. **Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ:**

ա/ 1918 թ. հուլիսի 17-ին ՀՀ կառավարությունը և Հայոց կենտրոնական ազգային խորհուրդը մեկնեցին Թիֆլիսից և երկու օր անց ժամանեցին Երևան:
բ/ ՀՀ-ն 1920 թ. սկզբին ուներ 4 առանձին բրիգադ՝ 9 գնդով, մեկ հեծյալ բրիգադ՝ 3 գնդով, ավիաջոկատ (Կարսում), 2 զրահագնացք և այլ ուժեր:
գ/ 1919 թ. հուլիսին կազմակերպվեց պետական թանգարան (ներկայիս Հայաստանի պատմության թանգարանը):
դ/ 1919 թ. հունվարի 7-19-ը Թիֆլիսում Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրվեց հաշտության կոնֆերանս:
ե/ 1920 թ. օգոստոսի 2-ին Գորիսից նահանջից առաջ բոլշևիկները տեղում գնդակահարեցին մի խումբ հայ գործիչների, այդ թվում՝ Հայաստանի խորհրդարանի պատգամավորներ Արշակ Շիրվանյանին ու Վահան Խորենուն:
զ/ 1921 թ. հունվարի վերջերին Հայհեղկոմի պլենումը որոշեց ձերբակալել և մեկուսացնել ՀՅԴ բոլոր կոմիտեների և կազմակերպությունների ղեկավարներին, նախկին կառավարության անդամներին:

34. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ:
ա/ «Ամբողջական Հայաստանի անկախության» մասին հայտարարություն ընդունեց նաև Պողոս Նուբարի նախաձեռնությամբ 1919 թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը Փարիզում կայացած Հայոց ազգային համագումարը:
բ/ 1920 թ. հունվարի ջարդերի հետևանքով Մարաշի 12 հազար հայերից 8 հազարը փրկվեց ու տեղափոխվեց Լիբանան:
գ/ Հայաստանի ազատագրության հարավային ծրագրի համաձայն Հայաստանում 6 տարի ժամկետով պահպանվելու էր 20 հազար ռուսական զորք:
դ/ Շ. Շահամիրյանը նամակագրական աշխույժ կապ ուներ Հովհաննես Լազարյանի հետ:
ե/ ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոն մայիսի 26-ին որոշեց «Շարունակել բանակցությունները Հայաստանի հետ և չստանձնել ռուսական զորքերի օգնությամբ անմիջապես խորհրդայնացնելու նախաձեռնություն»:
զ/ 1920 նոյեմբերի 11-ին Ռուսաստանի կառավարությունը հանդես եկավ ՀՀ ու Թուրքիայի միջև միջնորդությամբ հանդես գալու պատրաստակամությամբ:

35. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ:
ա/ 1994 թ. համաժողովրդական քվեարկությամբ ԼՂՀ նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը:
բ/ 1991 թ. սեպտեմբերի 21-ին 2 մլն 430 հազար մարդ (կամ քվեարկության իրավունք ունեցողների 94,39 տոկոսը) կողմ քվեարկեց անկախությանը:
գ/ 1995 թ. դեկտեմբերին հանրապետության 35 շրջանների միավորման միջոցով ստեղծվեցին 10 մարզեր:
դ/ ՀՀ սահմանադրության փոփոխության առաջին տարբերակը հաստատվեց 2005 թ. նոյեմբերի 29-ին համաժողովրդական հանրաքվեով:
ե/ 1991 թ. փետրվարին խորհրդարանի ընդունած օրենքով ստեղծվեց բազմակուսակցական համակարգ:
զ/ 1999 թ. հոկտեմբերի 27-ին զինված 8 ահաբեկիչներ ներխուժեցին ԱԺ-ի նիստերի դահլիճ և կրակ բացեցին ներկաների վրա:

36. Շարադրանք: «Կոմունիստական կուսակցության մենիշխանության հաստատումը և այլ կուսակցությունների գործունեության արգելումը: Ներկուսակցական պայքարը, անհատի պաշտամունքի ձևավորումը, քաղաքական բռնաճնշումները» (5 միավոր)

Հանձնաժողովի նախագահ՝ **պ.գ.դ., պրոֆեսոր Է. Գ. Մինասյան**

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1.	բ
2.	բ
3.	բ
4.	ա
5.	գ
6.	բ
7.	գ
8.	բ
9.	բ
10.	դ
11.	բ
12.	ա
13.	ա
14.	ա
15.	ա
16.	գ դ զ է
17.	ա գ ե
18.	դ ե զ
19.	գ ե զ է
20.	գ դ ը թ
21.	ա զ
22.	ե գ դ ա զ բ
23.	զ է գ բ ա դ ե
24.	զ գ ը դ է բ ա ե
25.	ա ե գ դ զ բ է
26.	զ ժ ա ը է ե բ գ թ դ
27.	բ ե ա դ գ զ
28.	ը է բ զ գ դ ա ե
29.	ե ա ը է դ զ գ բ
30.	ե զ է գ բ ա դ
31.	ճ ճ ս ճ ս ս
32.	ս ճ ճ ս ճ ճ
33.	ճ ս ս ս ս ս
34.	ճ ս ս ճ ս ճ
35.	ս ս ս ս ճ ս